

ՍԻՐՈՒՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՑԻ ԳՐԱԿԱՆ ՆԱԽԱՏԻՊԵՐԻ
ՅԵՏՔԵՐՈՎ

Իր բովանդակությամբ ու ժողովրդական ուղղվածությամբ, գեղարվեստական յուրացման թարմությամբ ու ինքնատիպությամբ, լեզվի և ոճի յուրահատկություններով Խաչիկ Դաշտենցի ստեղծագործությունը նորագույն շրջանի հայ գրականության ուշագրավ երևույթներից է: Նրա աստեղային ժամը սկսվել է «Խողեղան» վեպի հրատարակությունից (1956) հետո, իսկ «հավերժական կյանքի» լիաթոք շնչառությունն ապահովել է «Ռանչպարների կանչը» (1979) վիպասը:

Դաշտենցը «Խողեղանով» հնչեցնում է կրակի ու ավերի միջով անցած, հայրենիք և ընտանիք կորցրած հայ գաղթականի ապրելու, ստեղծագործելու, գերդաստանի ծուխը շարունակելու հարատև հիմնը: «Ռանչպարների կանչը» պատմում է 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ ազգային ազատագրության այն հերոսների մասին, որոնք պատմությանը հայտնի են «հայդուկներ» (ֆիդայիներ) անունով: «Խողեղան» վեպում գրողի կերտած հերոսների իրական նախատիպերից մեկն է հովիվ Ասատուրը (քրդերեն՝ Խեղեղան):

Ինչպես վկայում են վավերագրերը, 1943թ. Ավետիք Իսահակյանը և Խաչիկ Դաշտենցը հյուրընկալվել են Թալիսի շրջանի Իրինդ գյուղում, ուր «Խողեղան» վեպի գլխավոր կերպար հովիվ Ասատուրի հարկի տակ հանդիպել են հայ գրականության երկու երախտավորները: Այդ մասին է պատմում հետագայում Դաշտենցի գրած նամակի հետևյալ հատվածը, որը հասցեագրված է Ավետիք Իսահակյանին. «Այդ սերնդի մարդկանցից շատերն այժմ չկան: Վեպի կենտրոնական անձին՝ հովիվ Խողեղանին, Դուք տեսաք 1943 թվականին Իրինդում, ամառային մի խաղաղ երեկո, երբ նստած զրուցում էինք գյուղի դպրոցի առաջ: Ցավով հայտնում եմ, որ նա նույնպես չկա ապրողների մեջ: Ավարտելով այս գործը սասունցի այդ հասարակ ու ավանդապահ մարդկանց մասին՝ ես այն սիրով ծոցում եմ Ձեզ՝ ի հիշատակ տարիներ առաջ դեպի Արագած կատարած մեր անմոռանալի և երկարատև ուղևորության: 1956թ. մայիսի 28, Երևան»¹:

Իրինդուն հաստատվել էին Ղաշտենցի հայր Տոնեի մանկության ու հովվության ընկեր՝ դաշտատենցի Խողեղանն ու իր կին Բայազը, Խողեղանի եղբայր Սարգսի այրի Ոսկեհատն՝ իր Ստեփան և Արշակ տղաների, դուստրեր Սասնեթի և Ղարիբի հետ, հայտնի ջրաղացպան քեռի Խչոն, Էրզրի Սեմալ գյուղից Ղազարը, Գալուստ Քոթանյանն իր եղբայրների և էլի շատ ու շատ սասունցիներ:

Վերոհիշյալ վեպի «Խոսք ընթերցողին» վերնագրի տակ կարդում ենք. «Սույն վեպի հերոսների մի մասի հետ ես անձնական ծանոթություն եմ ունեցել և ամառային լուսնյակ գիշերներին գյուղական քարափներին նստած երկար գրուցել եմ նրանց հետ»²:

Ինչպես Խողեղանը, վեպի հերոսների մեծ մասը նույնպես իրական անձնավորություններ են, որոնցից շատերին Ղաշտենցն անձամբ ծանոթ էր. «Թամոյին ես չեմ տեսել, սակայն «Սասնա Տան» համրահայտ ասացող Թամո (Թոմաս) Ղավթյանի մասին գրելու համար ամենևին էլ հարկավոր չէր նրան տեսնել»³: Այդ ինքնամփոփ ծերունուն Թալինի շրջանի գյուղերում ու նրանցից էլ դուրս բոլորը գիտեին: Թամոյի հռչակն ու հեղինակությունն այնքան մեծ է եղել համերկրացիների շրջանում, որ սասունցիները համոզված էին, թե «Սասնա ծռերի» ամենաստույգ պատմությունը միայն նա գիտե, իսկ մյուս ասացողներն աղավաղում են: Այն, որ Թամոն ինքնաստեղծ կերպար չէ, վկայում է բանահավաք Կ.Սելիք Օհանջանյանը, որը «Սասնա ծռերի» Բ հատորի առաջին մասում (Երևան, 1944, էջ 155-157) հանգամանորեն շարադրել է ճախրական գյուղի մեծ ասացողի կենսագրությունը: Հենց այս կենսագրությունն էլ իր բոլոր մանրամասնություններով ընկած է վեպի հերոս Թամոյի գեղարվեստական կերպարի հիմքում:

Ուսումնասիրելով վերոհիշյալ շարադրանքը՝ հասկանում ենք, որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թողնելով հայրենի ճախրական գյուղը, Ղավթի նվիրական ջրաղացն ու բերդը, Թամոն 1920 թվականին հաստատվում է Թալինի շրջանի Վերին Ղարադոյմազ (այժմ՝ Վերին Սասնաշեն) գյուղում: Միայն նախնիների ավանդներով ապրող ծերունին այդպես էլ չի հաշտվում ծննդավայրի կարոտի, նոր կենցաղի ու պայմանների հետ և դառնում է ավելի ինքնամփոփ ու համառ: Դա է պատճառը, որ նրա դուռը եկած բանահավաքներից շատերը ձեռնուձեռն են վերադարձել: Իսկ Կարո Սելիք-Օհանջանյանին «Սասնա Տան» պատմությունը հաջողվել է գրի առնել միայն հավատարիկ կամ բանահավաք Եղիազար Կարապետյանի միջնորդության շնորհիվ, մի բացառիկ անձնավորություն, որին ընդունում և հարգում էր Թամոն:

Բացի թոմաս Դավթյանից Իրինդուն և շրջակա գյուղերում էպոսի շատ ասացողներ էին ապրում: Նրանցից էին Մանուկ Թորոսյանը, Խուբեցի Գասպարը: 1962թ. նոյեմբերի 11-ին Մանուկ Թորոսյանի թաղմանը Դաշտենցը հուզիչ դամբանական է կարդում՝ այն ավարտելով հետևյալ տողերով.

Սերունդներ, սերունդներ, լավ հսկեք այս փոսին,
Աստ ռամիկ է թաղված՝ շաղաղված էպոսին,
Մոռացված այս ճամփան թող դառնա միշտ բանուկ,
Տաս հազար ողորմի քո հոգուն, սուրբ Մանուկ⁴:

«Խողեղան» վեպի հերոսները նման են իրար, բայց իրարից տարբեր, այսինքն՝ հեղինակը տիպականացրել է յուրաքանչյուրին: Դետաքքերի է Դաշտատենցի Գևորգը, որն հանդես է գալիս որպես ժողովրդի ստեղծած մշակութային արժեքները փրկող հայրենասեր: Նրա նմանների միջոցով է, որ այսօր հայ ժողովուրդն աշխարհին ներկայանում է որպես հնագույն մշակույթ և քաղաքակրթություն ունեցող ազգ: Գևորգը դժվարությամբ էջմիածին է ուղարկում ս. Աղբերիկի ծեռագիր մատյանները, իսկ ինքն անասելի տառապանքների գնով թշնամուց փրկում Թարգմանչաց վանքի գարդաբանդակ դուռը, հասցնում Երևան: Այս մասին Ա.Ինճիկյանը գրում է. «Գեղարվեստական ընդհանրացման աստիճանին բարձրացված այս փաստերը կյանքից վերցրած իրողություններ են, որոնք բնութագրում են պատմական մեծ արժեքներ ստեղծած այն ժողովրդին, որի մի հատվածի տառապանքների և սխրանքների մասին է պատմում Խ.Դաշտենցն իր այս վեպում»⁵:

1950-60-ական թվականներին հեռավոր երկրներից հայեր էին այցելում Դայաստան: Նրանք չգիտեին՝ առաջինը Մայր աթոռ ս. Էջմիածին այցելությամբ՝ գնան, հետո նոր Խաչիկ Դաշտենցին, թե հակառակը:

Բանաստեղծ, մանկագիր, դրամատուրգ Վ.Վարդանյանը լավ ճանաչում էր սիրիահայ մշանավոր մտավորական, գրող, ծագումով Տավադրիկին մոտիկ Գյարմալ գյուղից Սիմոն Սիմոնյանին: Իր «Դրաշենի հոգու թռիչքով» գրքում նա գրում է. «Սիմոնի Բեյրութից ծագումով սասունցի մի վստահելի երիտասարդի ուղարկել էր Սասուն՝ Մոսկվա: Վերջինս Մարութա ս.Աստվածածին վանքի պատի շաղախից երկու-երեք կտոր տարել էր Սիմոնին, որպեսզի այնտեղ ապրող հայրենակիցներն իրենց աչքով տեսնեն այդ սրբազան մասունքը, շոշափեն, համբուրեն, իրենց կարոտն առնեն: Նա էլ դրա մի մասը մանրել էր շատ մանր լցրել ցեյլուլիտ տոպրակ այդ էլ դրել համապատասխան շորե տոպրակում, բերանը կարել և վստահելի մարդկանց հետ ուղարկել Երևան՝ Խ.Դաշտենցին:

Մեր հարևան Շղարշիկ գյուղում,-գրում է Վ.Վարդանյանը,-մահացել էր համերկրացի ծերունիներից մեկը:Դաշտենցը կանչեց ինձ, ասաց.«Սա Մարութա վանքից սուրբ մասունք է, Սիմոնն է ուղարկել: Ես լավ չեմ զգում, երևի մրսել եմ, թաղման չեմ կարող գալ, վերցրու կտանես գյուղ, կկանչես Քոթանյան Արշավիրին(նա այդ ժամանակ մեր գյուղի տնօրենն էր), երկուսով կտանք գերեզմանոց և մահացածների շիրիմներին մի-մի պտղունց կցանք ...Կհանգստանան...»⁶: Ահա այս իրական պատմության արտացոլքն է պատկերված «Խողեղան» վեպում, որտեղ հեղինակը գրում է.«Թամոն մեռնելուց առաջ խնդրել էր, որ իր գերեզմանի վրա շաբաթ մեկ անգամ մի թաս ալյուր շաղ տան և շատ անցորդներ կատարում էին նրա ցանկությունը: Գրքոն հանեց իր գրպանից մի թաս ալյուր և, երբ հեռանում էր, շաղ տվեց շիրիմին»⁷:

1956 թվականին մահանում է զորավար Սմբատ Բորոյանը (Մախլուտոն): Զամաժողովրդական թաղում էր. անհամար մարդկանցով, կառավարական մեքենաների պատկառազու թափորով զորավարի դին տեղափողվեց սբ. Էջմիածին և, իր կտակի համաձայն, թաղվեց Րաֆֆու խենթի կողքին՝ Արագածից փչող մարմանո գեփյուռի շնչին և վեհապանծ Սրարատի մայրական, լուսաշող, գուրգուրող հայացքի դեմ հանդիման:

Բոլորին հայտնի է, որ Րաֆֆու «խենթի» նախատիպը եղել է Սամսոն Տեր-Պողոսյանը, որն էլ 1877թ. հունիսին գեներալ Տեր-Ղուկասովին է հասցնում պաշարված Բայազետի բերդից ուղարկված նամակը՝ իրեն դնելով խենթի տեղ: Էջմիածին քաղաքի Գայանե վանքի բակում է գտնվում Սամսոնի (Վարդան) գերեզմանը: Երկու անձնուրաց հայրենասերներ իրենց կյանքի պատմությամբ՝ կողք կողքի քաջության դասեր են տալիս ներկա և ապագա սերունդներին:

«Ռանչպարների կանչում» պատկերված հայդուկները պատմական անձնավորություններ են, պայթող աղբյուրի նորօրյա «խենթերը»՝ Սասնա ծռերի շառավիղները: Զրեղեն շնչով այրեր, հայրենիքի մատաղացու որդիներ, որ ապրեցին միայն հայրենիքի կյանքով և դեռ իրենց կենդանության ժամանակ դարձան պատմություն: Եվ ահա նրանց առասպելական կյանքը, վեհ և արդար գործը, հերոսական պատմությունը, որի շունչը այնքան անհրաժեշտ է մեր ժողովրդին, «Ռանչպարների կանչով» մեզ է ներկայացնում հայ ֆիդայիների արդար պատմաբան Խաչիկ Դաշտենցը⁸:

Եվ ներկայացնում է քննախույզ պատմաբանի հմտությամբ պատմության հերոսներին՝ ծննդավայրերով, կնքանուններով ու պատմություններով, իրադարձություններով՝ կապերով, գործողություններով՝ կոնկրետ ժամանակով և որոշակի տեղերով,- գրում է Սուշեղ Գալշոյանը «Բրաբիոն ծաղիկ որոնողը» հոդվածում:

Վեպում դարասկզբի հայ ազատագրական պայքարի նվիրյալներն են՝ Աղբյուր Սերոբ, Անդրանիկ, Արաբո, Հրայր Դժոխք, Սևքարեցի Սաքո, Սպա-
ղանաց Մակար, Գևորգ Զուռ, Սմբատ(Մախլուտո), Արծիվ Պետո...

Հայդուկային շարժման ամենահամբավվոր ներկայացուցիչներից էր Փեթարա Իսրոն։ Շատերի նման նրան ևս քսանական թվականներին խորհրդային իշխանությունները աքսորեցին։ Աքսորավայրում, արդեն հիսուն տարին բոլորած ֆիդային կամքի գերագույն լարումով սկսում է մեսրոպյան տառերը սերտել և շարադրում է իր սերնդի հերոսական պատմությունը։ Ի դեպ, այս ոգեցունց եղելությունն է ընկած Մուշեղ Գալշոյանի «Մամիթե արքան» գողտրիկ պատմվածքի հիմքում։ Հայտնի է նաև, որ Փեթարա Իսրոն Գալշոյանի մորեղբայրն է։

Եթե մեկ հարյուրամյակ առաջ հայ երիտասարդությունը ազգային վերագարթոնք էր ապրում գերազանցապես Րաֆֆու, Պատկանյանի և Պեշիկթաշյանի բոցաշունչ երկերով, ապա վստահաբար կարելի է ասել, որ մեր օրերում այդ սրբազան առաքելությունն իրականացնողներից մեկը Խաչիկ Դաշտենցն է՝ իր համարձակ մտահղացմամբ։

Գաղտնիքը էպիկական մտածողության ու շարադրանքի բանահյուսա-
կան-էպոսային միտվածության մեջ է։ Այսինքն՝ քսաներորդ դարի սկզբներին Սասունի լեռներում Արաբոյի, Սերոբի, Անդրանիկի ու մյուսների տեսքով շրջում էին Սասունցի Դավիթը, Սեծ ու Փոքր Միերները և փորձում միջամտել Աստծո «գործերին», պատերազմ էին հայտարարում արդար աշխատանքի, խաղաղ կյանքի վրա որպես անեծք ծառացած թուրքին։

Խաչիկ Դաշտենցն առաջինն էր, որ գեղարվեստական տպավորիչ և ազդեցիկ ոճով մարմնավորեց Սեծն Արաբոյի կերպարը, որը հայդուկային շարժման նախակարապետն էր, ազգային-ազատագրական պայքարի սկզբնա-
վորողը։ «Ասում են թե Արաբոն մի քանի անգամ Արևելյան Հայաստան անցնելով հանդիպումներ է ունեցել ազգային շատ գործիչների հետ, ապա Թիֆլիսում աշխարհահռչակ Րաֆֆու հետ և իբրև «Կայծերի» գլխավոր հերոս Որսորդ Ավոյի նախատիպը հենց Արաբոն է», -գրում է Վ.Վարդանյանը⁹։

Վեպի հերոսները հիմնականում համապատասխանում են իրենց պատ-
մական նախատիպերին։ Այս առումով, թերևս փոքր-ինչ տարակուսանք է հա-
րուցում Կայծակ Անդրեասի կերպարը։ Դժվար է բացատրել, թե ինչու է նշա-
նավոր Բալապեխ Կարապետը «Ռանչպարների կանչում» դարձել Կայծակ
Անդրեաս։ Դաշտենցն ամենևին էլ անհրաժեշտություն չուներ այս առասպելա-
կան ֆիդայուն «ծպտելու», նամանավանդ, որ «Նեմրուծի վրա» գլխում,
թվարկելով Աղբյուր Սերոբի զինվորներին, հիշատակում է Բալապեխ Կարա-

պետի անունը: Այս անվանափոխությունը թերևս պայմանավորված է նրանով, որ Կարապետի արկածներով լի ողիսականն ավարտվում է 1915 թվականին (թուրքերն Բաղեշում նրան կախաղան են բարձրացնում), իսկ վիպասքում նրա կենսագրությունը երկարածովում է մինչև 40-ական թվականները:

Պետք է ընդգծել, որ վիպասքում չկան երևակայական կերպարներ: Իրական կերպար է նաև գելիեզուզանցի Ֆադեն, որը չհանդուրժելով իր արտում թուրքական զորանոցի գոյությունը, գիշերով քանդում է դրա պատերը և քարերը գլորում ծորը: Սակայն առավուտյան թուրք ոստիկանները հարկադրում են նրան՝ շալակով քարերը բարձրացնել ծորից: Ջայրացած Ֆադեն թողնում է գյուղը, մեն մի բահով բարձրանում է սարերը, Անդոկի փեշերին ընտրում մի հողակտոր և հաստատվում այնտեղ: Միննույն ժամանակ նա ակտիվորեն համագործակցում է ֆիդայիների հետ:

Դաշտենցի համար հավասարապես թանկ ու հարագատ են բոլոր հայրուկները, բայց «Ռանչպարներում» հատուկ ջերմությամբ է կերտված Անդրանիկի կերպարը, չնայած վերջինս վիպասքի գլխավոր կերպարը չէ: Ինչու. որովհետև գլխավոր են բոլոր կերպարներն անխտիր: Այստեղ որպես գլխավոր հանդես է գալիս մի ողջ սերունդ, իսկ այդ սերնդի գլուխն ու խորհրդանիշը Անդրանիկն էր: «Դաշտենցը նախապես ծրագրել էր իր երկը խորագրել «Շապինանդ» (շապինգարահիսարցի Անդրանիկ), և վիպասքի ստեղծագործական երկար ու ծիգ տարիներին էլ մտերիմների մեջ տարածված էին շշուկներ, թե «վեպ է գրում Անդրանիկ Ջորավարի մասին»¹⁰:

Դաշտենցն ընտրեց լավագույն տարբերակը՝ հետևելով Դ.Դեմիրճյանին, որն իր հանրահայտ պատմավեպն անվանեց ոչ թե «Վարդան Մամիկոնյան», այլև՝ «Վարդանանք»: Ջորավարը մենակ չէր, նա զորավար էր իր արծիվ քաջերով, որոնք զինվորագրվել էին հայրենիքի ազատագրության սուրբ, բայց անչափ դժվարին պայքարին:

Վեպում Բդե Միսակը ներկայանում է որպես Մամիկոն-Մախլուտոյի քեռի: Սա այնքան էլ հեռու չէ իրականությունից, քանզի Բդեյանների բազմանդամ գերդաստանը բարեկամական սերտ հարաբերությունների մեջ է եղել Սմբատեց ընտանիքի հետ: Մամիկոն-Մախլուտոն նույն Սմբատ Ջորավարն է, որն 1936 թ. Փարիզում հրատարակել է իր «Յուշեր» գիրքը, որից էր օգտվել է Դաշտենցը:

Յեղիմակը սիրով է նկարագրել Ծաղիկ Յամբարձումին, ով իրեն շալակած հասցրել է Յայաստան: Ծաղիկ Յամբարձումն է, որ հեքիաթի պես կպատմի Նեմրուքի Ասլան Աղբյուր Սերոբի, Սոսեի մասին շրջող ավանդավեպը: Իսկ անվանի գրականագետ Սուրեն Աղաբաբյանը այդ մասին ահա թե ինչ է գրել.«Յորեղբայրը՝ Ծաղիկ Յամբարձումը, որ փոքրիկ, հինգ տարեկան

հաջիկին շալակել էր մեջքին-անցել կոտորոճների, հրի ու սրի միջով, Ղաշտենցի մահվան օրը եկավ կանգնեց դեռ թարմ աճյունի առաջ, երկար ողբ ասաց: Այնքան իմաստուն ու այնքան տպավորիչ էին տարեց սասունցու խոսքերը, որ ներկաների հայացքի առաջ մի պահ փոքրամարմին հաջիկ Ղաշտենցը... խոշորոցավ ու նմանվեց Սասնա Տան դյուցազուններին»¹:

Իրապես, նրա փոքրիկ, վտիտ մարմնի մեջ բնությունը, իր հայրենի Սասունը դրել էին ասպետական բարձր ոգի: Դրա վկայությունն են և՛ իր կենսագրության, և՛ իր ստեղծագործության դրվագները:

Գրականություն

¹ Խ. Ղաշտենց «Խողեղան», Եր., 2000, էջ 12:

² Նույն տեղում, էջ 14:

³ Նույն տեղում, էջ 15:

⁴ Ս. Բաղդասարյան, «Խողեղան» (մենագրության), Ստեփանակերտ, 2009, էջ 79:

⁵ «Գրական թերթ», 1961թ., մարտի 17:

⁶ Վ. Վարդանյան, «Հրաշեկ հոգու թռիչքով», Եր., 2005, էջ 13:

⁷ Խ. Ղաշտենց, «Խողեղան», Եր., 2000, էջ 541:

⁸ Խ. Ղաշտենց, «Ռանչպարների կանչը», Եր., 1984, էջ 526:

⁹ Վ. Վարդանյան, «Հրաշեկ հոգու թռիչքով», Եր., 2005, էջ 60:

¹⁰ Վ. Վարդանյան, «Սասուն աշխարհի բանասացը», Եր., 2000, էջ 102:

¹¹ Ս. Աղաբաբյան, «XX դարի հայ գրականության զուգահեռականներում», Եր., 1983, էջ 283: